

գէորգ. որ է գլ. Poireau. Պրաս բանջարն կ'ը-
սուի եւս քուռակի ի բժշկարանս, որ է արք.
Քլորդաս. "Քուռակ", որ է կանոնակայու, կ'ըսէ
Ամիրտողվաթ. տես ի թ. 2612. Հ. Ալիշան
շփոթած է զպրս. կինոտուն ընդ լու. Gentiana ի
թ. 757. "տերեւն նման է կուտանչի տերեւին
(տես թ. 356 [այս ինքն՝ Բոգ = Gentiana])".
Շփոթութիւն կայ եւ ի թ. 3242, ուր Սուր-
ուրը = Վայրի Սիսոր՝ զայդ կը յիշուի ընդ
Gentiana. թուի թէ Սուրուրը կը նշանակէ
եւս լու. Teucrium Scordium, գլ. Germandrée
aquaticum. տես ի Թիւսն 1155, 3242:

Ծառակեռութիւն.

1. Խակ ի թ. 1025, "Դաշտան ձգեն, թուի
ուղղելի շինուած. համեմատէ ընդ թ. 2588:

Ճիք. 578. Գեղին ծողէն (զօր տես եւ
ի Շալակին, երես 677): 2724. Սուրու ծողէն:
= Երկրորդիս համար կ'ըսուի. "Գուցէ
ըլայ վերջիշեալ Սուրու ծողէնին (թ. 2715): Խճ
թուի թէ Սուրու է թուրք բառն Սուրու = Գեղին,
Սուրու վէսէ [= Սուրու հէնչ+], ինչպէս կ'ըսէ Կա-
մարկապցին ի թ. 578. որով Գեղին ծողէն եւ
Սուրու ծողէն կը նոյնանան: Տես եւ Սուրու ծողէն ի
թ. 2110, որ նոյնպէս թուի ի թուրք Սուրու բա-
ռէն, Սոր մէն: Եթէ Սուրու ծողէն ի հայ Սու-
րառէն ըլլար (որպէս թուի Սուրու ծողէն): յայն-
ժամ կ'ըսուելու Սուրու ծողէն. տես Սուրու Աւ[—]նուն,
թ. 98. Սուրու Գառնի, ի թ. 545. Սուրու հայու,
թ. 2718. Սուրու Ուեհան, թ. 2666. Սուրու Հուրու,
թ. 2874. Սուրու Տանի, ի թ. 2918: — Տես ի
համարն ձև զ'Սուրու ծողէն, նոյն կարծեցեալ ընդ
Սարուն? որոյ ուղղելն է Տանին, Տառն, գլ.
Garance.

Ճիւե. 626. Եւրծողէն: 878. Իւրծողէն:

Ճիւը. 707. Զէֆին? 1200. Ծէֆին:

Ճիւթ. 860. Իւշիւթու: 872. Իւրու իւրու:

Ճլ. 1035. Խորճէ: 1649. Հորճէ? ուր
կը յիշուի եւ Հորճէ ալիւր, եւ Հ. Ալիշան Հորճէ:

= Եթէ կայ ուղղականն Հորճէ քննելի
է թէ Խորճէ ուղղականն է թէ սեռական. Եթէ
սեռական է անշուշտ գրեալ է փոխանակ
Խորճէ, որով Խորճէ եւ Հորճէ կը նոյնանան:

(Հարուսաւութիւն)



ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԵՆՆԵՍԻ ԹՈՒՐԵՆԵԵՆ

Ի ԵՐԵՒ ԳՐԻ ՂԻ ԲԵՆԵՍՍԵՂԻ

(ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԵԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ*)

I.

Բանատեղծութեան:

Ուղիղ երեք շաբաթ առաջ, Մարտ
23ին, Մուկուայում մեռա հայ ժողովուրդի
մեծքանատեղծը՝ Յովհաննէս Թուրմանեան:

Հայորագոյն բանատեղծական զրա-
կանութեան ամենալաւագոյն երգիչն է
Թուրմանեան, որ ամբողջ քառորդ դար,
30 երկար եւ ծիգ տարիներ հնչեցրեց իր
քնարը եւ իր սրտի լարերով, իր զգայուն
երգերով ծառայեց հայ բանատեղծութեան
եւ հայ արուեստին:

Հայ բանատեղծների շարքում մի բա-
ցանիկ տեղ է գրաւում Թուրմանեան:

Նա գերազանցօրէն հայ գիղական
ժողովուրդի բանատեղծն էր, որ իր երգե-
րով բաց արեց մեր առաջ գիղական մո-
նացուած աշխարհը եւ գեղարուեստագէտի
վարպետ վրձինով նկարեց մեզ լացող եւ
ծիծաղկու հայ գիղը, իր բնութեան հրա-
շալի տեսարաններով, իր իզիթ-հերոսնե-
րով, իր պապենական-աւանդական ծէսե-
րով եւ իր դրամատիկական զոհերով:

Երգեց նա հայ գիղացու կեանքը,
նրա իշեալներն ու հոգեբանութիւնը, նրա
վիշտն ու խինդը, նրա ապրումներն ու
խոհերը:

Պատմեց նա հազար ու մի ուրախ եւ
տիսուր, գեղեցիկ եւ սիրուն պոէմիներ, լե-

* Այս բանականութիւնը արտասանուած է
Ամերիկայի հայ Ակումբի սրահն մէջ, 17 Ապրիլ 1923ին,
Յովհաննէսի Խշատակեն նուիրուած սպահան-
դիսին:

գենդներ եւ դիւցազներգութիւններ լեռնական այդ աշխարհից:

Նրա զրչի ներքոյ հայ գիտը լեզու առեց եւ խօսեց դիւթական, ներդաշնակ երգերով:

Այդ երգերը գիւղական մի-մի գեղարուեստական պատկերներ են, կենդանի, խորը եւ հոգեբանական, որոնք խօսում են ձեր սրտերի, ձեր հոգիների եւ ձեր զգացումների հետ:

Այդ պատկերներով նա սերունդներ դաստիարակեց, գեղեցկացրեց նրանց սիրտն ու հոգին, ազնուացրեց նրանց բարոյական աշխարհահայեացքը:

Նրանցից շատերը հնչում են այսօր հայ ժողովրդի շրթների վրայ եւ թոշում քերնից քերան: Նրա «Անուշը», «Մարօն», «Գութանի երգը», «Խճմի ինդիրիը», տարածուած են հայ ժողովրդի լայն խաւերում. իսկ նրա լեզենդներից եւ դիւցազներգութիւններից շատերը կազմում են մեր դպրոցական դասագրքերի լաւագոյն էջերը:

Այդ երգերով նա մի պատռաւոր տեղ է գրաւում. հայ բանաստեղծական գրականութեան պատմութեան մէջ:

II.

60—80 ական թոռականների հայ բանաստեղծութիւնը:

Յով. Թումաննեանի ստեղծագործութիւնները զնահատելու եւ նրա կատարած դերը ցոյց տալու համար անհրաժեշտ է ծանօթանալ բանաստեղծական այն մոտիւների եւ ուղղութեան հետ, որ տիրապետում էր մեր գրականութեան մէջ, նախքան նրա գրական հորիզոնի վրայ յայտնուելը:

60—80 ական թոռականների ժամանակաշրջանն է դա: Այն ժամանակ մեր գրականութեան եւ մեր բանաստեղծու-

թեան մէջ տիրապետում էր յեղափոխազգային ուղղութիւնը: Հայ բանաստեղծների ներշնչման եւ ոգեւորութեան աղբիւրը ազգայնական ոգին էր: Նրանք իրենց քնարի լարերի վրայ հնչեցնում էին ազգ եւ հայրենիք: Պատկերացնում էին հայի պատմական անցեալը, երգում նրա մեծութիւնը, դարեւոր տառապանքները: Մտրակում էին ազգի թերութիւններն ու պակասութիւնները: Կոուում էին խաւարի եւ տգիտութեան դէմ: Քարոզում էին լոյս եւ գիտութիւն: Նրանք համակուած էին վերածնութեան իդէաով, ինքնանանաչութեան գաղափարով: Պէտք էր ազգը վերածնել, պէտք էր հայրենիքը ազատազրել: Ահա ժամանակաշրջանի բանաստեղծութեան մոտիւնները, ուրիշ տեսակի թէմաներ անհասկանալի էին:

80-ական թոռականների վերջերին սակայն հայ բանաստեղծութեան համար բացւում է մի նոր շրջան: Հնչում են նոր մոտիւններ, նոր թէմաներ: Դա ուշագրաւ մի երեսյթ էր, որ ունէր իր հիմնական պատճառները: Գրականութիւնը, կեանքը առաջ էր թաւալուում նոր ուղիով, նոր ճանապարհով: Ի՞նչ էր այդ նոր ուղին: Հայրենի աշխարհում կար մի ամբողջ ժողովուրդ, աշխատող, արտադրող եւ կառուցանող. մի ամբողջ դասակարգ, որ լըռուած էր, արհամարուած եւ մոռացուած: Դա գիւղացիութիւնն էր, որ ունէր իր ուրոյն կեանքը, իր բնորոշ առանձնայատկութիւնները, իր հազար ու մի ցաւերը: Անշուշտ գրականութիւնն անտարբեր չէր կարող մնալ այդ աշխարհի հանդէպ: Բանաստեղծութիւնը պիտի երգէր այդ ժողովրդի կեանքը, պիտի պատկերացնէր այդ նոր աշխարհը: Դա ժամանակի հրամայողական պահանջն էր: Եւ ահա ազգային մոտիւնների հետ հնչում են գեղջկական-հովուերգական տաղեր: Բանաստեղծները երգում են ոչ միայն իրենց հայրենի աշխարհը, իրենց անծնական զգացումներն

ու խոհերը, այլ եւ զիւղական ժողովրդի կեանքը, նրա իդէալներն ու յոյզերը: Այդպիսով 80-ական թուականը հայ բանատեղութեան համար դառնում է պատմական մի շրջան: Այդ թուականին կառուցուում է բանաստեղծական նոր դպրոցը, բնադրական-գիտելիգուկան դպրոցը:

Քնարական դպրոցի համեստ ներկայացուցիչը հանդիսացաւ Յովհաննէս Յովհաննիսին: Նա մի քանի երգեր նուիրեց հայ զիւղին, բայց զիւղաւորապէս երգեց իր անհատական զգացումները, իր սէրը, իր ապրումներն ու խոհերը: Նա հանդիսացաւ նորազոյն բանաստեղծական զրականութեան առաջին քնարելիգուկի:

Յովհաննիսինի ժամանակաշրջանում, նրանից քիչ յետոյ, ասպարէզ եկաւ մի նոր բանաստեղծ, որ իր նոր բանաստեղծական էջերով նոր շունչ մոցրեց հայ քնարերգութեան մէջ: Դա Յովհաննէս Թումաննեանն էր, որ բանաստեղծական հորդագոյի վրայ յայտնուեց 1890 թուին “բանաստեղծութիւններ” ժողովածուով: Նա ժողովրդական կենդանի, պարզ լեզուով երգեց զիւղն եւ զիւղացիութիւնը, իր բոլոր առանձնայատկութիւններով եւ հայ ճանապարհ, հարթեց մի նոր ուղի: Դեռ աւելին: Նա հիմք դրեց զիւղական քնարերգութեան եւ դարձաւ նոր շրջանի ադրաբ: Այս նրա արժանիքը:

Գիւղն եւ զիւղական կեանքն երգուած է մեր բանատեղծական գրականութեան մէջ առանել կամ նուազ շափով: Գիւղական ամենաառաջին երգը հնչեցրեց յայտնի գրականագէտ-խմբագիր Մեսրոպ Թաղաղեանը, 40-ական թուականներին, «Գիւղական աղջիկն եմ զամբիւղաշէն» ուսանաւորով: Թաղիաղեանից յետոյ զիւղական պրէզիան լոեց մի ամքողջ շրջան: Այնուհետեւ, 50-ական թուականներին, հայ զիւղացու կեանքը շուրջ մի քանի երգեր յիւսեց Ռաֆ. Պատկանեանը: Նրանից յետոյ, 70-ական թուականներին Ղազարոս Աղայեանը հնչեցրեց զիւղական զողորիկ մեղեղին. երգեց նա “Ծափարակը”, “Առաւոտք զիւղում”, “Տաւարածի ճաշը”, “Հովուի անկողինը», որոնց մէջ ցոլացրեց զիւղական կեանքի այս կամ այն պատկերը: Աղայեանից յետոյ, 80-ական թուականի վերջերին, Յով. Յովհաննիսինի քանի երգեր նուիրեց հայ զիւղին, կերտելով “Հատիկը”, “Գիւղի ժամը”: Սակայն զիւղական բանաստեղծութիւնը որուեց իր իսկական հոնի մէջ, երբ գրական ասպարիզի վրայ յայտնուեց Յով. Թումաննեանը: Նա երգեց զիւղական աշխարհը վրձինի պէսպէս գոյներով եւ զարձաւ նոր ժամանակաշրջանի արտայայտիչը: Նրանով հայ գրականութեան մէջ սկզբնաւորեց մի նոր քնարերգութիւն, զիւղական քնարերգութեան շրջանը: Նրա կատարած պատմական այդ դերն արժանիք է խորին զնահատութեան:

III.

Հայ զիւղական բանաստեղծութիւններ:

Ի՞նչ պատկեր էր ներկայացնում, սակայն, մեզանում զիւղական բանաստեղծութիւնը Թումաննեանից առաջ: Քնարերգակ երգչի կատարած պատմական դերն աւելի պայծառ գոյներով լուսարաններու համար անհրաժեշտ է, որ կանգ առնենք նաև այս կարեւոր հանգամանքի վրայ:

IV.

Յովհաննիսի Թումաննեանի քնարը:

Այժմ՝ ծանօթանանը Յովհաննէս Թումաննեանի քնարի հետ, որ հնչեցրել է նա ամքողջ քառորդ դար:

Թումաննեանի քնարի լարերը քազմական են: Կերտել է նա լիրիկական գող-

տրիկ եւ զգայուն երգեր, որոնցից յայտնի են — “Ել աստղեր», “Համերգ», “Սարերում», “Իմ սէրը», “Իմերգը», “Ժպտուն աչքեր»,: Ստեղծագործել է ժողովրդական սիրուն պօէմսեր, կառուցանելով “Անուշը», “Մարօն», “Լուեցի Սարօն»,: Կենդանա, ցըել է ժողովրդական բանաստեղծութեան աննման գանձերը, ստեղծելով մեր գրականութեան լաւագոյն դիցազներգութիւնները՝ “Սասունցի Դաւիթ», եւ “Թմբկաբերդի առումը»,: Մշակել է ժողովրդական գեղեցիկ լեզենդներ եւ աւանդութիւններ, տալով “Շունն ու կատուն», “Ախմամար», “Անբախտ վաճառականներ», “Անիծած հարսը», “Արծիւն ու կաղնին», “Պողոս-Փետրոս», “Լուսաւորչի կանթեղը», “Փարւանա»,: Հիւսել է մեր գրականութեան լիրիկական-փիլիսոփայական ամենաառաջին գողտրիկ պոէմը — “Դէպի անհունը»,: Արտադրել է մանկական գողտրիկ պատմուածքներ եւ հեքեաթներ: Այլ եւ թողել է մի շարք թարգմանութիւններ Պուշկենից, Լերմոնտովից, Նադանից, Կուցովից, Գէօթէից, Բայրոնից: Այդ մեծ քնարերգակների ազդեցութեան ներքոյ էլնա կազմակերպուել է:

Ռուս գրականութիւնից նրա վրայ խոր ազդեցութիւն են գրոծել Պուշկինն ու Լերմոնտովը: “Իրեն քնիկ կովկասցի ու լեռնացի, գրում է Թամանեամ, ես սիրում եմ Պուշկինի ու Լերմոնտովի երգերն ու պուսները... թէպէս լեռների սերն ու լեռնային կեանքի թախիծը, տուանց այն էլ, յատուկ ես իմ հոգուն, բայց ուսու բանաստեղծները տուին իման պուսի այն իսկ ձեւը, իմաշխին կրում ես իմ գրուածքներից շատուրը — որովհետեւ մեր գրականութեամ մէջ տուաց այդպիսի պուսներ ամենենին ծկային»,: Ռուս բանաստեղծական դպրոցի ազդեցութիւնից բացի՝ Թումանեան ներշնչուել է նաև անգլիական գրականութիւնից, գլխաւորապէս ազդուել է Շեքսպիրից, որի

մասին գրում է. “Ինձ համար ամենասիրելին մնում է Շեքսպիրը»: Սակայն Թումանեան աւելի խոր տպաւորութիւններ եւ ազդեցութիւններ ստացել է զիւղական աշխարհից: Նրա մանկութեան շրջանն անցել է հայրենի գիւղում. գիւղական միջավայրը եւ կեանքն իրենց ուրոյն հոգեբանութեամբ հզօր ազդեցութիւն են գործել նրա հոգու վրայ:

Այդ բոլոր ազդեցութիւններով հանդերձ՝ Թումանեանի տաղանդը ինքնուրոյն է եւ ընածին: Այդ տաղանդը զարգացրել է նա ինքնաշխատութեան դպրոցում եւ կերտել իր ինքնուրոյն արուեստը:

1. Քննարական երգերը :

Թումանեան ուսանաւորներ գրելլ սկսել է շատ վաղ, Դազարոս Աղայեանի ասելով, 10-11 տարեկան հասակից: Նրա ամենաառաջին ուսանաւորն է “Շունն ու կատուն», խորազրով մանկական քերթուածը, որից յետոյ նա գրեց մի շարք քնարական երգեր, որոնք հետաքրքրական են որպէս բանաստեղծի հոգեբանութեան արտայայտութիւնը:

Այդ երգերի մէջ Թումանեան գերազանցապէս անհատական է: Այնտեղ նա չի շօշափում իր ժամանակի կեանքը, իր շրջանի երեւյթները, այլ, ընդհակառակը, երգում է իր ցաւատանչ կեանքը, իր “խորունկ վերքերը», իր հոգեկան զգացումներն ու յոյզերը, իր սէրն ու կարօտը: Երգում է նա մերթ վշտու ու թահիծու, մերթ ծիծաղկու եւ ժապուն: Նրանք աւելի կամ պակաս յաջողուած նուազներ են, որոնք աչքի են ընկնում իրենց պարզութեամբ, զգացումների անկեղծութեամբ եւ պատկերների կենդանութեամբ:

Այդ նուազների մէջ դուք գտնում էք մինաւոր եւ ցաւատանչ մի հոգի, թախծուու եւ զգայուն մի սիրտ, որ “հալածուած երկնքի ցրուած ամպերի նման» չի կա-

րողանում ոչ մի տեղ ապաստան գտնել: Նա հակայ դարդից ընկնում է սար ու ծոր եւ թափառում իր երազների եւ իր վերքերի հետ: Թափառում է նա ընութեան գրկում, մեն - մենակ, թախծուր սրտով: Շըջում է անտառի խորքերը, սարերի լանջերը, ժայռերի վրայ, ծաղիկների եւ վարդերի մէջ: Կէս զիշերին նա յոգնած, տանջուած նստում է սարի ծաղիկների մէջ, հայեացքն ուղղում դէպի մուգ կապոյտը, դէպի լուսաշող աստղերը եւ տխուր երգում.

“Ես երգեցի կէս զիշերին,
Եւ աստղերը իմ երգից
Գունատուեցին, դողողացին
Եւ թափուեցին երկնքից:

Վեհ ընութիւնը նրա հոգու մէջ յարուցանում է մելամաղծուր խոհեր եւ զգացումներ: Բանաստեղծը զգում է, որ պիտի զայ մի օր, որ ինքը պիտի մեռնի եւ ընութիւնը ժամանական վերլուծութեան է ենթարկում կեանքը: Ի՞նչ է մեր կեանքը: Կեանքը երազ է եւ երազը կեանք: Կեանքն անցնում է երազի պէս դէպի մահ, դէպի յաւիտենականութիւն: Սակայն անհունի մէջ չկայ մահ, այլ միայն սէր, անվերջ եւ անհատնում սէր: Եւ նա երգում է իր սէրը, երգում “Ժապուն աշքերը”, երգում իր կարօտը: Սակայն սիրոյ մէջ էլ բանաստեղծի զգայուն սիրտը չի ժապում, նրա հոգին չի պայծառանում: Թախիծ ու մորմոք, հառաչանք եւ “սեւ զիշեր” աղթայում են երգչի սիրտը: Եւ նա միշտ տխուր, միշտ տրտում թափառում է վիրաւոր եւ անմիտթար տենչերով:

Բանաստեղծի հոգեկան այդ մոհյլ տրամադրութիւնը սակայն երկար չի տեսում: Նա կարողանում է անհատական վշտի սահմանից դուրս գալ, երբ վերակառնում է հայրենի գիւղը, մոնում նա հապետական ժողովրդի մէջ: Այդտեղ նա նոր երգեր է երգում, նոր բանաստեղծու-

թիւններ հիւսում, եւ ստեղծագործում է ընարական գողորդիկ պատկերներ: Ահա այդ պատկերներից մէկը:

“Արի գութան, վարի գութան...
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուր տուր, խոփիդ դուրքան,
Օրհնեալ է Աստած, հօրօվէլ»:

Հայրենի հողի վրայ Թումանեան այլ եւս վերիկական երգիչ չէ: Այնտեղ նրա ընարը էլ չի հնչեցնում անհատական թախծուր երգեր, նա մոռանում է իր զգացումները, իր “խորոնկ վէրքերը,,,: Այդ երեւոյթը ունի իր հիմնական պատճառը: Այնտեղ նրա առաջ կանգնում է կենդանի, ստեղծագործուր նահապետական մի ամբողջ ժողովորդի, իր ժողովորդը մօտ է բանաստեղծի հը, այդ ժողովորդը մօտ է բանաստեղծի սիրտին, հարազատ նրա հոգուն: Եւ նրա սիրտին ու հոգին շղթայուում են այդ ժողովորդի կեանքով եւ նրա գեղարուետական լցացումներին եւ ստեղծագործութեան նիմթ դառնում: Այդ ստեղծագործութիւնների մէջ Թումանեան գեղջկական երգիչ է, գիւղական նկարիչ: Այդտեղ էլ կայանում է նրա տաղանդի ոյժը, նրա բանաստեղծական արժանիքը:

Գիւղի ընութեան եւ գիւղական ժողովրդի պատկերը Թումանեան ամենալաւ կերպով արտայայտիչ է իր ազէմանների մէջ:

2. Պուկմանը:

Պուկմանների մէջ Թումանեան զերազանցօքն գիւղի բանաստեղծ է: Նա սրնուել եւ կերպարանուել է գիւղական միջավայրում, մի խաշնարած լեռնական ժողովրդի ծոցում:

Նա խորապէս ուսումնասիրելէ գիւղական աշխարհը, թափանցելէ լեռնական ժողովրդի հոգեբանութեան մէջ, ծանօթա-

ցել նրա ապրումների եւ յոյզերի, նրա խոհերի եւ վշտերի հետ: Եւ այդ բոլորը դրոշմել է իր պոէմաների մէջ:

Այստեղ հայ գիւղի կեանքն է ցոլանում, գիւղական իրականութիւնը բիւրեղանում: Այդ տեսակէտից Թումանեանի պոէմաներն անզուզական են: Բայց գիւղական միջավայրի եւ իրականութեան ո՞ր կողմն է Թումանեան առանձնապէս պատկերացնում: Դիմաւորապէս նա գիւղական կեանքի հոգեկան կողմն է ցուցանում, գծում է գիւղի բարոյական աշխարհայեացը պատկերը:

Այդ պատկերի մէջ կարմիր թելի նման անցնում է նահապետական բարոյականութեան, «նոց աղաթի», երկաթէօրէնքը, որ գերազանցօրէն իշխում է գիւղական մի ամբողջ հասարակութեան վրայ: Մի ամբողջ ժողովորդ տնքում է այդ օրէնքի դաժան շղթաների մէջ: Գեղջուկների աշխարհայեացը, հոգին ու միտքը, կամքն ու խիղճը, հաւատն ու բարքերը ենթակայ են «աղաթի», դաժան իշխանութեան ներքոյ: Անզամ գիւղի իշխթները գալարուում են նրա կապանքների մէջ:

Գիւղում ամեն ինչ ընթանում է «աղաթով», որովհետեւ դա նահապետական մի աւանդ է, «ընտանեկան մի պրութիւն»,: Եւ այդ սրբութեան անունվ առաջանում են գիւղական սրտաճմէիկ դրամաները: Խամրում է գիւղում ինը տարեկան մատադի կեանք, աղաթի անունվ: Վրիժառութեան կարմիր զնդակով ընկնում է գիւղի իզիթը, աղաթի անունվ: Խորտակուում է սիրող սրտերի ջերմ սէրը, աղաթի անունվ:

Բարոյական քայբայման այդ պատկերները գծել է Թումանեան իր պոէմաներով: Այստեղ նրա տաղանդը ուժեղ է, խորը, գերազանց: Այստեղ նրա վրձինը խօսուն է, կենդանի, շաբժուն: Այստեղ նրա պատկերները ընական են, որոշ եւ

յատակ, ուր միտք կայ, զգայմունքների խորութիւն կայ, թոփչք կայ, կեանք կայ: Դուք տեսնում էք նրա զծած պատկերները եւ խորապէս տպաւորուում:

Գիւղական այդ պատկերներից մէկը «Անուշն,, է:

(Ը-Շ-Ն-Ա-Բ-Ւ-)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆԻ



ԿՈՄԻՏԱՍ ՎԵՐԴԱՊԵՏ

I.

Երաժիշտը:

Զուր ևնք սպասում որ տաղանդաւոր արուեստագէտը վերադառնայ դարձեալ մեր մէջ, իր քաղցր ձայնով արցունքներ խլէ մեր աչքերից եւ մեղ տանէ պտաշնելու Արաքսի եւ Եփրատի ավելին, Ալագեազի եւ Արարատի փէշերը: Մեր ականջները ևլ չեն լսում այն համերգները, երբ բոլորս միամին այդ կախարդական ձայների ազդեցութեանը տակ՝ ձամբորդում էինք Հայուսանի ձիւնապատ լեռների գագաթները: Կանաչ արօտներ եւ հազարադոյն ծաղկիներ էին անցնում մեր աչքերի տակով:

«Մեծ տառապողն էր որ կը խօսէր այնտեղ, մեծ համը, մերթ տխուր ու վըշ տարեկ իր «Կոռունկ» երգին մէջ, մերթ յուսալից Մազթաղինացիին ողբերովը, մերթ ուաղմական՝ Սիփանի սիւգերուն տակ, մերթ կեանքով առլսոն» իր լէլէներուն այնքան անցշա այնքան բնատոհմիկ մելոդիներուն յանկերգներով¹»:

Նա ո՞ր այնքան մէծ յաջողութեամբ հայ երգը տարաւ հասցրեց Ալպեան սպիր-

¹ Պատմեան «Աղատօմարտ» 1910